Ինչպես կանխարգելել կլիմայական վտանգավոր փոփոխությունները



62 Ո՞ր ոլորտն է մթնոլորտ արտանետում ամենաշատ ածխաթթու գազ

Ա Էներգետիկա

Բ Տրանսպորտ

Գ Արդյունաբերություն

Դ Գյուղատնտեսություն

63	Ո՞ր երկրի տարեկան ջերմոցային գազերի արտանետումներն են ամենաբարձրը
Ա	ԱՄՆ
Բ	Չինաստան
Գ	Ռուսաստան
Դ	Մեծ Բրիտանիա

64 Ո՞րն է առավել ցածր ածխածնային հետք ունեցող տրանսպորտի միջոցը

Ա Ավտոմեքենա

Բ Ինքնաթիռ

Գ Հեծանիվ

Դ Երկաթուղային տրանսպորտ

65	Վերականգնվող էներգիայի ո՞ր աղբյուրն է առավել խոցելի կլիմայի փոփոխության պայմաններում
Ա	Արևային էներգիա
Բ	Կենսազանգված
Գ	Հիդրոէներգիա
Դ	Ցամաքային քամու էներգիա

66 Նշվածներից ո՞ր էներգիայի աղբյուրը չի համարվում վերականգնվող

Ա Արևային էներգիա

Բ Քամու էներգիա

Գ Կենսազանգված

Դ Քարածուխ

67	Ինչ ազդեցություն ունի օվկիանոսի վրա մթնոլորտում CO_2-ի ավելացումը
Ա	Ջրի պղտորում
Բ	Ջրի թթվայնացում
Գ	Ջրի աղիության բարձրացում
Դ	Ջրի աղիության նվազում

68	Ո՞ր կենսաբանական գործընթացն է նվազեցնում CO_2-ի քանակը մթնոլորտում
Ա	Ջրի գոլորշացում բույսերի տերևների միջոցով
Բ	Կենդանիների շնչառություն
Գ	Ֆոտոսինթեզ
Դ	Օրգանական նյութերի քայքայում

69	Նշված էներգակիրներից ո՞րը չի հանդիսանում ածխաջրածնային
Ա	Ուրան
Բ	Բնական գազ
Գ	Տորֆ
Դ	Քարածուխ

70	Նշված էներգիայի աղբյուրներից ո՞րն է աշխարհում սպառվում ամենաշատը
Ա	Բնական գազ
Բ	Նավթ
Գ	Փայտ
Դ	Քամու էներգիա

71	Ո՞ր երկրից է Հայաստանը ներմուծում բնական գազ
Ա	Ղազախստան
Բ	Ուկրաինա
Գ	Ռուսաստան
Դ	Վրաստան

72 Էներգիայի ո՞ր աղբյուրի օգտագործումն է բերում ջերմոցային գազերի նվազագույն արտանետման

Ա Քարածուխ

Բ Բնական գազ

Գ Արևային էներգիա

Դ Նավթ

73	Էներգիայի ո՞ր աղբյուրի օգտագործումն է բերում ջերմոցային գազերի առավելագույն արտանետման
Ա	Ածուխ
Բ	Արևային էներգիա
Գ	Նավթ
Դ	Բնական գազ

74 Եվկաթուղային տրանսպորտով ՀՀ ներմուծվում և արտահանվում է ապրանքների

Ա Մոտ 30%-ը

Բ Մոտ 90%-ը

Գ Մոտ 10%-ը

Դ Մոտ 70%-ը

75 Ո՞րն է ատոմակայանների հիմնական էկոլոգիական խնդիրը

Ա Ջերմոցային գազերի արտանետում

Բ Վտանգավոր թափոնների գոյացում և աղետալի վթարների ռիսկեր

Գ Էկոլոգիական խնդիրներ չկան

Դ Միջուկային վառելիքի սղություն

76 Հողմակայաններ չեն կառուցվում

Ա Ափամերձ տարածքներում

Բ Ծովում, ափից ոչ այնքան հեռու

Գ Լեռներում

Դ Օվկիանոսի մեջտեղում

77 Կենսազանգվածի օգտագործման թերությունն է

Ա CO_2-ի արտանետումները մթնոլորտ չեզոք են

Բ Թափոնների քանակի կրճատումը

Գ Պարարտանյութերի ստացումը

Դ Տեղափոխման անհարմարությունը և ծախսատարությունը

78 Բրազիլիայում ավտոմոբիլային վառելիքի 1/5 մասն արտադրվում է

Ա Բանանի կեղևից

Բ Սուրճի հատիկներից

Գ Շաքարեղեգից

Դ Կոկոսի յուղից

79	Ո՞ր երկրում է էլեկտրաէներգիայի մոտ 1/3-ը արտադրվում երկրաջերմային էլեկտրակայաններում
Ա	Իսպանիա
Բ	Իտալիա
Գ	Իսլանդիա
Դ	Իռլանդիա

80	Վերականգնվող էներգիայի ո՞ր աղբյուրը չի կարող օգտագործվել Հայաստանում
Ա	Մակընթացային
Բ	Քամու
Գ	Արևային
Դ	Կենսազանգվածային

81	Ո՞ր աղբյուրից է ստացվում Հայաստանի էներգիայի մեծ մասը
Ա	Նավթ
Բ	Գազ
Գ	Արևային էներգիա
Դ	Քարածուխ

82	Ո՞ր երկրում են հողմակայաններն արտադրում էլեկտրաէներգիայի շուրջ 30%-ը
Ա	Ավստրալիա
Բ	Դանիա
Գ	ԱՄՆ
Դ	Մեծ Բրիտանիա

83	Ո՞ր քաղաքում է առավել արդյունավետ օգտագործվում արեգակնային էներգիան
Ա	Երևան
Բ	Օսլո
Գ	Լոնդոն
Դ	Կիև

84 Ո՞ր վայրում է կառուցվել Հայաստանի առաջին հողմային էլեկտրակայանը

Ա Պուշկինի լեռնանցք

Բ Ջաջուռի լեռնանցք

Գ Քարախաչի լեռնանցք

Դ Փամբակի լեռնանցք

85	Ինչ է նշանակում «կարգ A» պիտակավորումն էլեկտրական սարքերի վրա
Ա	Արտադրված են էլեկտրախնայող գործարանում
Բ	Սպառում են շատ էլեկտրաէներգիա
Գ	Ամենահզորն են
Դ	Սպառում են քիչ էլեկտրաէներգիա

86 Ինչպե՞ս կարող է հասարակական տրանսպորտի օգտագործումը նպաստել կլիմայի փոփոխության դեմ պայքարին

Ա Նվազեցնելով անհատական մեքենաների թիվը

Բ Նվազեցնելով մեկ անձի հաշվով ջերմոցային գազերի արտանետումները

Գ Նվազեցնելով օդի խոնավությունը

Դ Նվազեցնելով խցանումները

87 Ո՞րն է լուսադիոդային լամպերի առավելությունը

Ա Ունեն բազմազան դիզայն

Բ Կարելի է գցել սովորական աղբամանի մեջ

Գ Ծառայում են երկար՝ օգտագործելով քիչ էներգիա

Դ Ավելի էժան են

88 Էլեկտրաէներգիայի ո՞ր մասն է օգտագործվում լուսավորման համար

Ա Մոտ 5%

Բ Մոտ 15%

Գ Մոտ 35%

Դ Մոտ 55%

89 Ի՞նչ է նշանակում «ածխածնային հետք»

Ա	Ածխաթթու գազի պարունակությունն է մթնոլորտում
Բ	Անտառներում պարունակվող ածխածնի պաշարների ամբողջությունն է
Գ	Մարդու գործունեությունից արտանետված ջերմոցային գազերի քանակն է
Դ	Հանածո վառելիքում պարունակվող ածխածնի պաշարներն են

90 **Ինչ է մեզ օգնում գնահատել սարքի էներգաարդյունավետությունը**

- **Ա** Էներգաարդյունավետության պիտակները
- **Բ** Սարքի արժեքը
- **Գ** Սարքի ծառայության ժամկետը
- **Դ** Սարքի պատրաստման նյութը

91 Անհատներն ու կազմակերպությունները իրենց ածխածնային հետքը կարող են փոխհատուցել

Ա Ընտրելով էներգաարդյունավետ սարքեր

Բ Անջատելով սարքերը և լույսը՝ երբ չեն օգտագործվում

Գ Նվազեցնելով լուսավորող սարքերի թիվը

Դ Տնկելով ծառեր

92	Տրանսպորտի ո՞ր տեսակին է բաժին ընկնում ջերմոցային գազերի արտանետումների ամենամեծ քանակը
Ա	Երկաթուղային
Բ	Ջրային
Գ	Օդային
Դ	Ավտոմոբիլային

93	Ակտիվ է համարվում այն տունը, որտեղ
Ա	Չի օգտագործվում արտաքին սնուցմամբ էներգիա
Բ	Արտադրվում է էներգիա
Գ	Ամեն ինչ կառավարվում է ավտոմատ համակարգով
Դ	Ապրում են էկոլոգիական շարժման ակտիվիստներ

94	Հյուսիսային երկրներում պասիվ է համարվում այն տունը, որը
Ա	Գրեթե չի օգտագործում էներգիա
Բ	Ջերմության կորուստ գրեթե չունի
Գ	Չի համապատասխանում շինարարական նորմերին
Դ	Չի կիրառում ավտոմատ կարգավորում

95	Տներում ջերմային կորուստները հիմնականում տեղի են ունենում
Ա	Հատակի միջոցով
Բ	Պատուհանների միջոցով
Գ	Պատերի միջոցով
Դ	Առաստաղի կամ տանիքի միջոցով

96	Ածխաածնային հետքը նվազեցնելու համար գնումների կատարելիս պետք է
Ա	Օգտագործել պոլիէթիլենային մեկանգամյա տոպրակ
Բ	Օգտագործել մի քանի փոքր պլաստիկ տոպրակ
Գ	Օգտագործել թղթե մեկանգամյա տոպրակ
Դ	Օգտագործել կտորից բազմակի օգտագործման պայուսակ

97 Ո՞ր տեսակի մթերքն ունի նվազագույն ածխածնային հետք

Ա Տեղական արտադրության բանջարեղեն

Բ Տեղական արտադրության մսամթերք

Գ Հարևան երկրից ներկրված մսամթերք

Դ Հեռավոր երկրներից ներկրված մրգեր

98 Ճաշ եփելիս էներգիա խնայելու համար պետք է

Ա Կաթսայի հատակը լինի գոգավոր

Բ Կաթսան լինի կափարիչով փակված

Գ Կաթսայի չափսը լինի ավելի փոքր, քան այրիչը

Դ Կաթսան միշտ բաց պահել

99 Փարիզի համաձայնագրի հիմնական նպատակն է սահմանափակել գլոբալ ջերմաստիճանի աճը մինչև

Ա 3°C

Բ 2.5°C

Գ 2°C

Դ 1°C

100 Ո՞ր տարբերակն է ներկայացնում կայուն զարգացման երեք հիմնական բաղադրիչները

Ա	Տնտեսական աճ, բնապահպանություն և սոցիալական բարեկեցություն
Բ	Տեխնոլոգիաներ, նորարարություն և համագործակցություն
Գ	Կլիմայի փոփոխություն, կենսաբազմազանություն և աղտոտում
Դ	Առևտուր, գյուղատնտեսություն և քաղաքաշինություն

